ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ
ՓՐԱՅՎԻԹ & ԻՆՎԵՍՏՄԵՆԹ ԲԵՆՔԻՆԳ

ՀԱՎԵԼՎԱԾ

Հաստատված է նոր խմբագրությամբ՝

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ Տնօրինության

07.02.2020թ. թիվ 08-Լ որոշմամբ

Ուժի մեջ է՝ 07.02.2020թ.-ից

ԲԱՆԿԻ ՔԱՐՏԱՊԱՆ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԱՅԻՆ ՊՐՈԴՈՒԿՏՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ	Պրոդուկտի անվանում	Քարտի տեսակ	Առավելագույն սահմանաչափ	Ժամկետ	Մարման նկարագրություն և առանձնահատկությունները	Սակագին/ տոկոսադրույք
1	Վերականգնվող քարտային վարկային գիծ	MC Standard MC Gold MC Business	Ֆիզ.անձանց, max. 5,000,000 ՀՀ դրամ 10,000 ԱՄՆ դոլար 10,000 Եվրո Իրավ.անձ, max. 10,000,000 ՀՀ դրամ 20,000 ԱՄՆ դոլար 20,000 Եվրո	1-3 տարի	Մինչև հաջորդ ամսվա 16-րդ օրը վարկառուն պարտավոր է մարել վարկի օգտագործված գումարի առնվազն 10-20 տոկոսը և մարման օրվա դրությամբ վարկի օգտագործված գումարի դիմաց հաշվարկված տոկոսներն ամբողջությամբ: Մայր գումարի ամբողջական մարումը կատարվում է պայմանագրի ժամկետի վերջում:	Մինչև 18% 10-16% 10-16%
2	Նվազող սահմանաչափով վերականգնվող քարտային վարկային գիծ	MC Standard MC Gold MC Business	Ֆիզ.անձանց, max. 5,000,000 ՀՀ դրամ 10,000 ԱՄՆ դոլար 10,000 Եվրո Իրավ.անձ, max. 10,000,000 ՀՀ դրամ 20,000 ԱՄՆ դոլար 20,000 Եվրո	1-3 տարի	Մինչև հաջորդ ամսվա 16-րդ օրը վարկառուն պարտավոր է ամբողջությամբ մարել վարկի օգտագործված գումարի դիմաց մինչ այդ օրը հաշվարկված տոկոսները: Պայմանագրի գործողության վերջին ամիսներին՝ առնվազն 5 կամ հաճախորդի հայտում նշված քանակով, բայց ոչ պակաս քան 5 ամիս, Բանկը յուրաքանչյուր ամիս իրականացնում է վարկի առավելագույն սահմանաչափի նվազեցում՝ սահմանաչափի գումարի համապատասխան տոկոսի/մասի չափով: Նվազեցումը կատարվում է քարտին դրամական միջոցների մուտքագրման օրը: Սահմանաչափի նվազեցվումը կատարվում է նաև վարկի չօգտագործված մասի չափով:	Մինչև 18% 10-16% 10-16%
3	Արտոնյալ ժամանակահատվածով վերականգնվող քարտային վարկային գիծ	MC Standard MC Gold MC Business	Max. 5,000,000 ՀՀ դրամ 10,000 ԱՄՆ դոլար 10,000 Եվրո	1-3 տարի	Եթե մինչև հաջորդ ամսվա 16-րդ օրը (ներառյալ) վարկառուն մարում է օգտագործված վարկային գծի գումարն ամբողջությամբ, ապա Բանկն օգտագործված գումարի դիմաց տոկոսներ չի հաշվարկում: Եթե Վարկառուն նշված ժամանակահատվածում մարում չի կատարում կամ մարում է օգտագործված վարկային գծի գումարն ոչ	Կանխիկացման միջնորդավճար 0.5% Մինչև 18% 10-16% 10-16%

					ամբողջությամբ, ապա Վարկատուն հաշվարկում է տոկոսներ օգտագործված գումարի դիմաց՝սկսած Բանկի Գործառնական օր համակարգում օգտագործված գումարի ձևակերպման օրվանից մինչև պարտավորության ամբողջական կատարումը:	
4	Պարտադիր մարումով արտոնյալ ժամանակահատվածով վերականգնվող քարտային վարկային գիծ	MC Standard MC Gold MC Business	Max. 5,000,000 ՀՀ դրամ 10,000 ԱՄՆ դոլար 10,000 Եվրո	1-3 տարի	Եթե մինչև հաջորդ ամսվա 16-րդ օրը (ներառյալ) վարկառուն մարում է օգտագործված վարկային գծի գումարն ամբողջությամբ, ապա Բանկն օգտագործված գումարի դիմաց տոկոսներ չի հաշվարկում: Վարկառուն պարտավոր է մինչև հաջորդ ամսվա 16-րդ օրը (ներառյալ) մարել օգտագործված վարկային գծի գումարի առնվազն 10%-ը: Եթե Վարկառուն նշված ժամանակահատվածում մարում չի կատարում կամ մարում է օգտագործված վարկային գծի գումարն ոչ ամբողջությամբ, ապա Վարկատուն հաշվարկում է տոկոսներ օգտագործված գումարի դիմաց՝սկսած Բանկի Գործառնական օր համակարգում օգտագործված գումարի ձևակերպման օրվանից մինչև պարտավորության ամբողջական կատարումը:	Կանխիկացման միջնորդավճար 0.5% Մինչև 18% 10-16% 10-16%
5	Չվերականգնվող քարտային վարկային գիծ	ArCa կամ MC Standard	Համաձայն Բանկի ՎԿ որոշման	Համաձայն Բանկի ՎԿ որոշման	• Անուիտետային • Մայր գումարի հավասարաչափ մարման ձև • Մայր գումարի մարումը ժամկետի վերջում	Համաձայն Բանկի ՎԿ որոշման

Պարզաբանումներ՝

- Բանկի աշխատակիցների վարկային քարտային գծերը տրամադրվում են Բանկի աշխատակիցներին վարկերի տրամադրման կարգի համաձայն:
- Սույն պայմանները կիրառվում են առանց ապահովության քարտային վարկային գծերի տրամադրման ժամանակ, այլ դեպքերում պայմանները սահմանվում են Բանկի այլ իրավական ակտերի համաձայն:
- 4-րդ տեսակի գծի դեպքում վարկային գծի գումարի օգտագործված առնվազն 10%-ը չմարելու դեպքում ժամկետանց է դառնում նշած 10%-ը կամ դրա չմարված մասը, ինչպես նաև կուտակված տոկոսագումարը, որը ձևակերպվում է որպես ժամկետանց պարտավորություն: